ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ.սեպտեմբերի 21-24-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի Իտալիայի Հանրապետություն (Միլան) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝** Ռաֆայել Գևորգյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Իտալիայի Հանրապետություն (Միլան), 2022 թվականի սեպտեմբերի 21-24-ը:

4. **Հրավիրող կողմը՝** «Տեքստիլ Ալյանս Հայաստան-Իտալիա» գործարար համաժողովը իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ:

5. **Գործուղման նպատակը՝** ՀՀ էկոնոմիկայի նախարարության ֆինանսավորմամբ Միլանում՝ նորաձևության շաբաթի շրջանակներում, անցկացվող «Տեքստիլ Ալյանս Հայաստան-Իտալիա» գործարար համաժողովի պատվիրակության գլխավորում, համաժողովի անխափան աշխատանքի ապահովում, հանդիպումներ դիվանագիտական և գործարար նշանակություն ունեցող գործընկերների հետ:

6. **Քննարկված թեմաները՝** Սեպտեմբերի 22-ին Միլանի Վիսկոնտիի պալատում՝ «Տեքստիլ Ալյանս Հայաստան-Իտալիա» գործարար համաժողովի բացման ժամանակ նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը բացման խոսքով հանդես է եկել համաժողովի ավելի քան 80 հյուրերի, այդ թվում Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ծովինար Համբարձումյանի և Իտալիայի նորաձևության ազգային պալատի պատվավոր նախագահ Մարիո Բոզելլի առջև: Պարոն Գևորգյանը իր խոսքում անդրադարձել է ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ռազմական ագրեսիային և դրա շուրջ միջազգային հարթակներում իրազեկման կարևորությանը: Փոխնախարարը նաև շեշտադրել է երկրի անգնահատելի ներուժը թեթև արդյունաբերության և ստեղծարար

ոլորտներում: Ցուցադրվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ստեղծված տեսահոլովակը, որը ներկայացնում է ՀՀ տեքստիլ ոլորտի հնարավորությունները: Օրակարգով նախատեսված B2B հանդիպումների ընթացքում վարել է մի շարք գործնական քննարկումներ իտալացի և Իտալիայում բնակվող ազգությամբ հայ թեթև արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչ գործարարների հետ:

Համաժողովին մասնակցեցին ՀՀ տեքստիլ ոլորտի հետևյալ ներկայացուցիչները.

- «Սարտեքս» ՍՊԸ
- «Օրիգինալ տեքստիլ» կարի արտադրամաս
- «Էլինա» կանացի հագուստի արտադրություն
- «Ռոբերտո» կոշիկի արտադրություն
- «Սալի» կոշիկի արտադրություն
- «Լալունց» մանկական հագուստի արտադրություն

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Մի շարք B2B հանդիպումների ընթացքում ոլորտի ներկայացուցիչները քննարկել են իրենց հետաքրքրող հարցերը, սեփական բիզնեսը ընդլայնելու և միջազգային համագործակցությունների շրջանակները ընդլայնելու հնարավորությունները, հումք Հայաստան ներկրելու հնարավոր տարբերակները, ինչպես նաև հանդիպել են մտավոր սեփականության հարցերով զբաղվող իրավաբանների թիմին՝սեփական բրենդի գրանցումը և միջազգային հարթակներում բրենդի անխափան ներկայությունը ապահովելու նպատակով:

Պարոն Գևորգյանը ներկա է եղել հայ դիզայներների նոր հավաքածուների ցուցադրությանը, որը ևս անց է կացվել էկոնոմիայի նախարարության ֆինանսական աջակցությամբ և համակարգմամբ տեղի ունեցող՝ «Տեքստիլ Այլանս Հայաստան-Իտալիա» գործարար համաժողովի շրջանակներում՝ MADE IN ARMENIA խորագրի ներքո: Ցուցադրությանը անդրադարձել են միջազգային մամուլի այնպիսի հեղինակավոր պարբերականներ, ինչպիսիք են՝ HARPER'S BAZAAR, MARIE CLAIRE, ELLE և այլ ամսագրեր: Ստորև ներկայացված են մամուլի անդրադարձի հղումները.

1. AND KRONOS
2. LA SICILIA
3. AFARITALIANI
4. LIBERO
5. THE CUBE MAGAZINE
6. BUONGIORNO LIFESTYLE MAGAZINE
7. FASHION WEEK ONLINE
8. THE SPIN-OFF
9. FASHION UNITED
10. FASHION WEEK ONLINE CALENDAR
11. HARPER'S BAZAAR
12. ELLE
13. THE IMPRESSION
14. MARIE CLAIRE
15. WOMAN
16. FASHION MAGAZINE

Գործուղման շրջանակներում կազմակերպվել է համատեղ այց՝ WHITE ցուցահանդես, որը անց է կացվում Միլանի նորաձևության շաբաթի շրջանակներում, սեպտեմբերի 22-ից 25-ը ընկած ժամանակահատվածում: Գործնական հանդիպումների և քննարկումների արդյունքում, որոշվել է մյուս տարի աջակցել կոշիկի, հագուստի և դիզայներական հագուստի հայ արտադրողներին՝ ցուցահանդեսում ներկայանալու գործում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Սեպտեմբերի 23-ին տեղի են ունեցել այցեր դեպի տեքստիլ ոլորտի գործարաններ և արտադրամասեր: Առանձին հանդիպումներ են տեղի ունեցել խոշոր արտադրողների հետ, ովքեր հետաքրքրված են ՀՀ-ում արտադրամասեր հիմնելով և արտադրանքի մի մասը դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանելով:

Այցի արդյունքում հետևյալ կազմակերպությունների և անհատների հետ շարունակվում են քննարկումները հետագա համագործակցության վերաբերյալ՝

- Lamborghini
- Fondazione Italia Cina
- Gruppo Colombo
- Marco Poletti
- Diana Yanes Consulting
- Associazione Culturale Sportiva ABAJ
- Business transmission
- Gruppo CHC
- Salvatore Caputo
- Tomasian Brand
- Camera Nazionale della Moda Italiana
- Alessandro Piccinini
- Business transmission
- Eve Group Milan
- Filiera Moda Italia
- Matveychuk Aleksey
- Pixel Modena: Antonio Flammia

Գործուղման շրջանակներում նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը այցելել է Կոմո քաղաքում գտնվող GRUPPO COLOMBO կտորի ինովացիոն արտադրություն և DIRECTAPLUS գրաֆիտի նանոպլաստետների վրա հիմնված արտադրանքի խոշորագույն գործարան: Վերջինիս հետ հանդիպման ժամանակ ձեռք է բերվել

նախնական պայմանավորվածություն նմանատիպ գործարան հիմնել նաև Հայաստանում՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության գործող հարկային պայմանների և այլ գործող արտոնությունների վրա: Կազմակերպությունների ղեկավարների և ՀՀ տեքստիլ ընկերությունների ներկայացուցիչների հետ համատեղ հանդիպումների ընթացքում քննարկվել են հնարավոր համագործակցության ճանապարհներ են և ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ իտալացի գործընկերներին ՀՀ-ում հյուրընկալելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

04.10.2022թ.